ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 22 .05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով 23.01.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-9/16-2 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **960,000** (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Դրոյի 15-51
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 220300123068000
ՀՎՀՀ 02522153	ՀՎՀՀ 00842845
ՀՀ ՊՆ ՆՅԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-2 պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Մատակարարումները ըստ 2020թ. եռամսյակների, այդ թվում՝		Մատակարարման հասցեն
								3-րդ եռամսյակ		
								Քանակ		
44	Պուլսօքսիմետրի տվիչ	ChoiceMMed	Beijing Choice Electronic Technology Co.Ltd	հատ	48,000	10	480,000	10		ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
77	Պուլսօքսիմետրի տվիչ	ChoiceMMed	Beijing Choice Electronic Technology Co.Ltd	հատ	48,000	10	480,000	10		ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-2 պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	CPV ծածկագիրը	CPV անվանումը	Գնման առարկայի անվանումը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից, ըստ ամիսների, ընդ որում՝							
					մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.
44	33111490/519	բժշկական սարքավորումների պահեստամասեր	Պուլսօքսիմետրի տվիչ	480,000	0	0	480,000	480,000	480,000	480,000	480,000	480,000
77	33111490/520	բժշկական սարքավորումների պահեստամասեր	Պուլսօքսիմետրի տվիչ	480,000	0	0	480,000	480,000	480,000	480,000	480,000	480,000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԵՏՈՐԴ

ՀՀ աշխատանքային նախարարություն
ՊՄՆ ԵՏՍ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ տնօրեն

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ